

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07.09.2015

Ք. Իջևան

Ներկա էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
2. Կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
3. Ամբիոնների 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանների հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: / Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմություն, պատշաճ կարգապահություն և հասարակական ակտիվություն: Վ. Ալեքսանյանը փաստեց, որ ֆակուլտետում նվազում է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը խոչընդոտ է հանդիսանում նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելիս: Այդուհանդերձ, նման ուսանողներ կան և պետք է խրախուսել նրանց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - «Պատմություն» մասնագիտության ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 2-րդ կուրսի ուսանող Նվեր Վաչագանի Բայրամյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե

դասերի ընթացքում, թե հասարակական հանձնարարություններ կատարելիս: Այդ պատճառով դեկանը Նվեր Բայրամյանին առաջարկեց «Վազգեն Սարգսյանի» անվան կրթաթոշակի:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների շրջանում առաջադիմությամբ և ուսանողական հասարակական աշխատանքներում ներգրավվածությամբ աչքի է ընկել 3-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Հրաչյայի Դովլաթբեկյանը: Դեկանը ներկայացրեց նրան որպես պարտաճանաչ ավագ և ուսանողուհի: Ջուլիետա Դովլաթբեկյանին առաջարկեց «Դավիթ Անհաղթի» անվան կրթաթոշակի:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առաջադիմությամբ աչքի է ընկել 3-րդ կուրսի ուսանողուհի Վարսենիկ Սարգսյանը: Նա վերջին երեք կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Վարսենիկ Սարգսյանին դեկանն առաջարկեց «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Նվեր Բայրամյանին որպես «Վազգեն Սարգսյանի», Ջուլիետա Դովլաթբեկյանին՝ «Դավիթ Անհաղթի», Վարսենիկ Սարգսյանին՝ «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող հինգ մասնագիտությունների կողմից դեռևս նախորդ ուստարվա ավարտին տրված կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հաստատել 2015-2016 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Դա կոյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների ամբիոնների 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2015-2016 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը,
բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա
առաջին և երկրորդ կիսամյակների աշխատանքային պլանները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան

Քաղվածք

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի
2015թ. մայիսի 17-ին տեղի ունեցած № 2 նիստի արձանագրությունից.

Նիստին մասնակցում էին ֆակուլտետի գիտխորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

4.«Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիղոնի
Մկրտչյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված
գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը: /Զեկուցող՝ Վ. Ավագյան/

ԼՄԵՅԻՆ.

Օրակարգի 4-րդ կետի վերաբերյալ Վ. Ավագյանը ներկայացրեց «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը: Վ. Ավագյանը հայտնեց, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին: Նա երաշխավորվում է մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին: Ամբիոնը դիմում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի նիստի որոշումը: Վ. Ավագյանը ծանոթացրեց հայցողի անձնական գործի նյութերին՝ նշելով հետևյալը. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, վեց տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա մեծ հաջողությամբ դասավանդում է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում:

Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2011թ.: Վերջին տարիներին նա հրատարակել է գիտական 11 հոդված, 1 գրախոսություն, 1 կազմարարական աշխատանք, 2 թեզիս և ուսումնամեթոդական մեկ աշխատանք:

Նա արհեստավարժ դասախոս է, ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների մեծ փորձ, հմուտ և գործիմաց է, կարողանում է հետաքրքրություն առաջացնել դասավանդվող նյութի նկատմամբ: Գարիկ Գվիդոնի Մկրտչյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերջին տարիների արդյունքը միջինը կազմում է 4,12 բալ:

Հաշվի առնելով այդ ամենը Վ. Ավագյանը նշեց, որ բ.գ.թ., ասիստենտ Գարիկ Գվիդոնի Մկրտչյանը լիովին արժանի է դոցենտի գիտական կոչման և առաջարկեց հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և նրան

երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին:

Այնուհետ Վ. Ալեքսանյանը հարցը դրեց ֆակուլտետի գիտխորհրդի քննարկման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. –Բ.գ.թ. Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ., ասիստենտ Ս. Խաչատրյանը:

Արտահայտվողները միահամուռ կերպով առաջարկեցին երաշխավորել Գ. Գ. Մկրտչյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին և հարցը դնել բաց քվեարկության:

Բաց քվեարկությամբ միաձայն որոշվեց.

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին:

բ/ Դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդին՝ միջնորդել ԵՊՀ խորհրդի առջև բ.գ.թ. Գարիկ Գվիդոնի Մկրտչյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան